ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1

ք. Երևան «22» 03 2019թ.

ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Անի Օբոսյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պոլիգոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Առաքելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հողամասերի չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2400000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե	«Պոլիգոն» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 4	ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20/11
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Հրազդան մ/ճ
Հ/Հ 900011145027	Հ/Հ՝ 163158012175
ՀՎՀՀ 02528489	ՀՎՀՀ՝ 03019908
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Անի Օբոսյան	**Կարեն Առաքելյան**
/պաշտոնակատար/	**/Տնօրեն/**
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«22» 03 2019թ. կնքված
«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	71251100/1	Հողամասերի չափագրում և հատակագծերի կազմում համաձայն կից ներակայցվող տեխնիկական բնութագրի	հա	2400000	134.5	ք. Երևան և ՀՀ մարզեր	Ծառայությունների գնումը կիրականացվի պայմագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 2019թ. ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ.՝ առավելագույն քանակների շրջանակներում պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի (պատվերների) հիման վրա, ընդ որում, Կատարողը հայտը (պատվերը) ստանալուց հետո Երևան քաղաքում և քաղաքին սահմանակից մարզերում գտնվող անշարժ գույքի չափագրումը, հատակագծի կազմումը և կոմիտեին տրամադրումը պետք է իրականացնի մինչև 10 օրյա, իսկ մնացած մարզերում գտնվող անշարժ գույքինը՝ մինչև 30 օրյա ժամկետում:

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Պետական գույքի կառավարման կոմիտեի պատվերով Կատարողի կողմից պետք է կազմվեն և տրամադրվեն առավելագույնը **134.5հա** մակերեսով հողամասերի հատակագծեր, որոնք պետք է համապատասխանեն հողամասի հատակագծին ներկայացվող ներքոհիշյալ պարտադիր պահանջներին և ձևին: Հողամասերը տեղակայված են ՀՀ ողջ տարածքում: Յուրաքանչյուր անգամ պատվեր տալուց պատվիրատուի կողմից հստակ կնշվի չափագրման ենթակա հողամասի գտնվելու վայրը:

Հատակագծեր կազմողը պատվերը ստանալուց հետո Երևան քաղաքում և քաղաքին սահմանակից մարզերում գտնվող հողամասերի չափագրումը, հատակագծի կազմումը և կոմիտեին տրամադրումը պետք է իրականացնի մինչև 10 օրյա, իսկ մնացած մարզերում գտնվող հողամասերինը՝ մինչև 30 օրյա ժամկետում: Նշված ժամկետներում ծառայության արդյունքները չներկայացնելու դեպքում պետք է տրամադրվի գրավոր պարզաբանում: Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից ներկայացված պարզաբանումը ոչ հիմնավոր գնահատվելու դեպքում՝ ուշացված ժամկետների մասով կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Հատակագծեր կազմողը պարտավոր է մինչև հողամասի պետական գրանցումը՝ հատակագծերում անվճար կատարել անհրաժեշտ ուղղումներ և փոփոխություններ՝ առաջադրանքը ստանալուց հետո վերը նշված ժամկետներում (ըստ հողամասի տեղակայման վայրի):

Եթե պայմանագրի կատարման ընթացքում պարզվի, որ հատակագիծը կազմելու համար անհրաժեշտ են սույն տեխնիկական բնութագրով չնախատեսված հետազոտություններ կամ այլ գործողություններ, ապա դրանք իրականացվում են Կատարողի կողմից՝ առանց լրացուցիչ վճարի:

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Պատվիրատուի կողմից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավունքների պետական գրանցման դեպքերում, հողամասերի հատակագծերը կազմվում են ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 20.10.11թ. հ. 284-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ի համաձայն:

2. Հողամասերը չափագրվում և հատակագիծը կազմվում է քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնող՝ համապատասխան որակավորում ունեցող անձը, որն իրավունք ունի պատվիրատուից պահանջելու մատուցվելիք ծառայություններին վերաբերող անհրաժեշտ նյութերը, գործունեությունն իրականացնելու նպատակով, ինչպես նաև պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե)՝ համակարգից ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն հետևյալ կերպ՝

1) քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող որակավորված անձի (այսուհետ՝ որակավորում ունեցող անձի) կողմից պատվիրված յուրաքանչյուր միավոր անշարժ գույքի վերաբերյալ (բացառությամբ բազմաբնակարան բնակելի շենքերի ծավալում տեղակայված անշարժ գույքի միավորների) անհրաժեշտ ելակետային տվյալները (ՎԻՋԻԷս-84) WGS-84 գեոդեզիական կոորդինատային համակարգում (գեոդեզիական հիմնակետերի կոորդինատների, կամ տվյալ համայնքի կադաստրային քարտեզից հատված) (այսուհետ՝ տվյալներ) ձեռք է բերում առցանց ռեժիմով կամ կոմիտեի աշխատակազմի ցանկացած սպասարկման գրասենյակ

համապատասխան դիմում ներկայացնելու և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածով սահմանված վճարները կատարելու դեպքում:

2) Կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից դիմումի պատասխանը պատրաստվում և հետ է վերադարձվում սպասարկման գրասենյակ: Սպասարկման գրասենյակում պատրաստված պատասխանը, կոորդինատների համար թղթային տեսքով՝ կոմիտեի լոգոյով, ստորագրություններով և հաստատված կնիքով (կոմիտեի կողմից տրամադրված տվյալները փոփոխության չենթարկվելու և իսկությունը հաստատելու նպատակով), իսկ քարտեզների/հատակագծերի համար՝ շեյփ (shp) կամ դի վի ջի/դի իքս էֆ/դի գը են (dwg/dxf/dgn) ֆորմատներով էլեկտրոնային կրիչներով (խտասկավառակի (CD–ի) վրա), առանց վերաձայնագրման հնարավորության տրվում է դիմումատուին:

3. Որակավորում ունեցող անձը կոմիտեի համակարգից ձեռք բերված տվյալները՝ չափագրման աշխատանքներն ավարտելուց հետո, տրամադրում է պատվիրատուին:

4. Կատարված աշխատանքները պատվիրատուին տրամադրվում են թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչներով (շեյփ (shp), դի վի ջի/դի իքս էֆ/դի գը են (dwg/dxf/dgn) ֆորմատներով):

5. Անշարժ գույքի նկատմամբ գործարք իրականացնելիս անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից դիմումի հետ միասին ներկայացվում է նաև որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագծերը թղթային և էլեկտրոնային տարբերակով, ինչպես նաև կոմիտեից ձեռք բերված տվյալները (խտասկավառակ (CD), տեղեկանքի կրկնօրինակ և այլ):

6. Կախված հողամասերի չափերից, հողամասերի հատակագծերը ներկայացվում են Ա-1, Ա-2, Ա-3 կամ Ա-4 չափսի թղթի վրա, որոնց վրա պետք է արտահայտվեն հետևյալ պարտադիր պահանջները.

1) «Հողամասի հատակագիծ» գլխատառերով նշագրումից ցած նշվում են հողօգտագործողի տվյալները (քաղաքացու անունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը):

2) «Հողհատկացման հիմքը» տողը լրացվում է միայն այն դեպքում, եթե առկա է հողամասի նկատմամբ իրավունքների ծագման հիմքը:

Նշված դեպքում լրացվում է հողամասի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման օրը, ամիսը, տարեթիվը, համարը: Համայնքային սեփականության հողամասերի տրամադրման ժամանակ հատակագծի վերևի աջ անկյունում կատարվում է նշագրում՝ «Հաստատում եմ», որը ստորագրվում է հողամասի հատակագիծը հաստատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից, նշվում է վերջինիս ազգանունը, անունը, պաշտոնը և կնքվում է հողամասը տրամադրող մարմնի կնիքով:

3) «Մարզ, համայնք, հասցե» տողում լրացվում է հողամասի գտնվելու վայրը կամ հասցեն:

4) Հատակագծի վերևի հատվածում գծագրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ձեռք բերված կամ հատկացված հողամասի հատակագիծը: Ինքնակամ զավթած հողամասերը չեն չափագրվում և հողամասի հատակագծում չեն գծագրվում: Եթե նշված հողամասում տեղակայված են շինություններ, դրանք ևս գծագրվում են հողամասի հատակագծում (եթե հատկացված հողամասին կից կա զավթած հողամաս, կամ հատկացված հողամասում կառուցված է ինքնակամ շինություն, որի մի մասը գտնվում է հողամասում, իսկ մյուս մասը կառուցված է զավթած հողամասում, ապա հատկացված հողամասի և ինքնակամ զավթած հողամասի հատման գծերը հատակագծում պատկերվում են կետագծերով): Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ձեռք բերված կամ հատկացված հողամասում գտնվող ինքնակամ կառուցված շինությունները հատակագծում նշագծվում (շտրիխապատվում) են:

5) Հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերը համարակալվում են հողամասի ներքևի ձախ անկյունից սկսած ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ:

6) Հողամասի հատակագիծը գծագրվում է 1:200, 1:500, 1:1000, 1:2000 կամ 1:5000 մասշտաբով՝ կախված տրամադրվող հողամասի չափից:

7) Հատակագծի ներքին ձախ հատվածում նշվում են՝

1. հողամասի մակերեսը՝ հեկտարով (0.00000 ճշտությամբ).

2. հողամասի կադաստրային ծածկագիրը, եթե այդպիսին կա կամ հրապարակային սակարկության պայմանական ծածկագիրը.

3. հողամասի նպատակային նշանակությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի.

4. հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի.

5. հողամասի նկատմամբ սերվիտուտները և հողօգտագործման սահմանափակումները (դրանց առկայության պարագայում), իսկ հողամասի հատակագծի վրա շտրիխվում է սերվիտուտի գոտին:

8) Հատակագծի ներքևի միջին հատվածում նշվում են հողամասի և շինությունների շրջադարձային (բեկման) կետերի համարները, կոորդինատները (ՎիՋիԷս-84) WGS-84 գեոդեզիական կոորդինատային համակարգով, այդ կետերի միջև գծային չափերը և հողամասի սահմանակից հողօգտագործողները կամ օբյեկտները՝ դրանց վերաբերյալ տվյալների առկայության դեպքում, շինությունների համարները՝ ըստ հողամասի հատակագծի և անվանումների:

Եթե նշված կետերի քանակը այնպիսին է, որ դրանք հնարավոր չէ տեղադրել սույն կետով նշված հատվածում, ապա համապատասխան տվյալները կարող են զետեղվել թղթի հակառակ երեսին:

Եթե հողամասը ծանրաբեռնված չէ շինություններով, ապա հատակագծի «Շինության» կոորդինատները չեն լրացվում:

7. Բաժանվող գույքի հատակագիծը կազմվում է հետևյալ կերպ՝ հավելված N 1-ում սահմանված հատակագծում ցույց է տրվում ընդհանուր գույքը, որի վրա նշագծվում (շտրիխապատվում) և ցույց է տրվում բաժանվող մասը:

8. Եթե հողամասի հատակագծի վրա կան տարածքներ, որոնք պատվիրատուին տրամադրվում են օգտագործման, ընդհանուր համատեղ սեփականության, վարձակալության և այլ իրավունքներով, ապա հատակագծի վրա ցույց է տրվում այդ տարածքը և կատարվում է համապատասխան նշում՝ օգտագործման, ընդհանուր համատեղ սեփականության, վարձակալության և այլ իրավունքով:

9. Եթե գրանցված շինությանը կից կառուցվում է նոր շինություն, կամ հողամասի մեջ կառուցվել է նոր շինություն, ապա պատվիրատուի ցանկությամբ չափագրվում է միայն հողամասը և նոր կառուցված շինությունը:

10. Հողամասի հատակագծի ներքևի մասում լրացվում է որակավորված անձի անուն-ազգանունը, կատարման ամսաթիվը, համապատասխան որակավորման վկայականի համարը, տրման ամսաթիվը, իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անվանումը, ստորագրվում է և դրվում կնիք:

Հավելված 1



ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏՀՇՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

(ստորագրություն)
Անի Օբոյան
/պաշտոնակատար/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Պոլիգոն» ՍՊԸ
ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20/11
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Հրազդան մ/ճ
Հ/Հ՝ 163158012175
ՀՎՀՀ՝ 03019908

(ստորագրություն)
Կարեն Առաքելյան
/Տնօրեն/
Կ.Տ.

Հավելված N 2
«22» 03 2019թ. կնքված
«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71251100/1	Հողամասերի չափագրում և հատակագծերի կազմում		840.000	840.000	840.000	1,440.000	1,440.000	1,440.000	2,400.000	2,400.000	2,400.000	**2,400.000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏՉՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

(ստորագրություն)
Անի Օբոսյան
/պաշտոնակատար/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Պոլիգոն» ՍՊԸ
ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20/11
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Հրազդան մ/ճ
Հ/Հ՝ 163158012175
ՀՎՀՀ՝ 03019908

(ստորագրություն)
Կարեն Առաքելյան
/Տնօրեն/
Կ.Տ.

Հավելված 3
«22» 03 2019թ. կնքված
«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Պետության կարիքների համար հողամասերի չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների մատուցման» պետական գնման այմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1»
Պատվիրատուն՝ ի դեմս Կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության պետի ժ/պ՝ Ռ. Մարդոյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս,_____
հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«22» 03 2019թ. կնքված
«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1
պայմանագրի կնքման ամսաթիվը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 8
«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան 21. «03» 2019
Մարտի 2019թ.**

«Պոլիգոն» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Կարեն Առաքելյանի (անձնագիրAM0335996 տրված 007-ի կողմից 14.06.2011թ.), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1» ծածկագրով գնման ընթացակարգին: Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.2 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.4 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.5 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.6 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.7 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև 15/01/2020 ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Պոլիգոն» ՍՊԸ
ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20/11
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Հրազդան մ/ճ
Հ/Հ՝ 163158012175
ՀՎՀՀ՝ 03019908
Տնօրեն Կ.Առաքելյան _____

*** լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**
(պայմանագրի կատարման ապահովում)

2.Ներկայացման ամսաթիվը՝ "21" 03 2019թ.

3. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Պոլիգոն» ՍՊԸ

4. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Հրազդան մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ 163158012175

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 03019908

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառուի անվանումը՝ ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02528489

10.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն(բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխ. գործառնական վարչություն

11.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758

12.Գումարը (թվերով և բառերով)՝ 240 000 երկու հարյուր քառասուն հազար

13. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

14.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

15.Գործարքի (վճարման) նպատակը՝ Պայմանագրի կատարման ապահովում

16. Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ **«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/1»** 17. Առդիր՝ ---էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
21.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 21.գ "___" ___ 20___ թ.	20.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. 20.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

«ՊՈԼԻԳՈՆ» ՍՊԸ
"ПОЛИГОН" LLC
"POLIGON" LLC
03019908

Ն-09/3/19-19
21 03 19թ